

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հեպատիտ Ա պատվաստանյութ

Ի՞նչ պետք է դուք իմանաք

Many Vaccine Information Statements are available in Spanish and other languages. See www.immunize.org/vis.
Պատվաստանյութերին վերաբերող շատ հայտարարություններ հասանելի են իսպաներենով և այլ լեզուներով: Տե՛ս <http://www.immunize.org/vis>

1 Ի՞նչ է հեպատիտ Ա-ն:

Հեպատիտ Ա-ն յարդի լուրջ հիվանդություն է, որն առաջանում է հեպատիտ Ա վիրուսից (HAV): HAV-ը հեպատիտի Ա-ով հիվանդ մարդկանց կղանքի մեջ է հայտնաբերվում:

Այն սովորաբար տարածվում է անձնական մոտ շփումից և հաճախ HAV պարունակող ուտելիք կամ ջուր օգտագործելուց: Հեպատիտ Ա ունեցող հիվանդը կարող է դյուրությամբ հիվանդությունը փոխանցել միևնույն տանն ապրող մյուս մարդկանց:

Հեպատիտ Ա-ն կարող է առաջացնել.

- «հարբուխանման» հիվանդություն,
- դեղնախտ (դեղին մաշկ կամ աչքեր, մուգ գույնով մեզ)
- Ստամոքսի սուր ցավեր և լուծ (երեխաների մոտ)

Հեպատիտ Ա ունեցող անձանց հաճախ անհրաժեշտ է լինում հոսպիտալացնել (5 մարդուց 1-ը):

Հեպատիտ Ա ունեցող չափահաս անձից հաճախ այնքան հիվանդ են լինում, որ չեն կարողանում աշխատել մոտ մեկ ամիս:

Հաճախ մարդիկ մահանում են հեպատիտ Ա-ի պատճառով (1000 դեպքից 3-ից 6 մահվան դեպք)

Հեպատիտ Ա պատվաստանյութը կարող է կանխարգելել հեպատիտ Ա-ն:

2 Ո՞վ և ե՞րբ պետք է հեպատիտ Ա-ի պատվաստ ստանա:

Ո՞վ

Որոշ մարդիկ պետք է կանոնավոր կերպով հեպատիտ Ա-ի պատվաստանյութ ստանան.

- Մեկ և երկու տարեկան բոլոր երեխաները (12 ամսականից մինչև 23 ամսական):
- 1 տարեկան և ավելի երոզ ցանկացած ոք, ով ճամփորդում կամ աշխատում է հեպատիտի Ա-ի բարձր կամ միջին տարածվածությամբ երկրում, ինչպիսիք են Կենտրոնական կամ հարավային Ամերիկայում, Մեքսիկայում, Ասիայում (բացի Ճապոնիան), Աֆրիկայում և Արևելյան Եվրոպայում գտնվողները: Հավելյալ տեղեկությունների համար տես www.cdc.gov/travel:
- 2-18 տարեկան երեխաները և դեռահասները, ովքեր ապրում են այն նահանգներում և համայնքներում, որտեղ հիվանդության դեպքերի բարձր հաճախականության պատճառով կանոնավոր պատվաստում է կիրառվում:
- Տղամարդիկ, ովքեր սեռական հարաբերություն ունեն տղամարդու հետ:
- Մարդիկ, ովքեր հոգեմետ դեղեր են օգտագործում:

- Մարդիկ, ովքեր լյարդի խրոնիկական հիվանդություն ունեն:
- Մարդիկ, ովքեր բուժվում են մակարդման գործոնի կոնցենտրատներով:
- Մարդիկ, ովքեր աշխատում են HAV-ով վարակված պրիմատների կամ ովքեր աշխատում են HAV-ի հետ հետազոտական լաբորատորիաներում:
- Ընտանիքի այն անդամները, ովքեր պլանավորում են երեխա որդեգրել կամ խնամել նոր որդեգրված երեխայի այն երկրից, որտեղ հեպատիտ Ա- տարածված է:

Այլ մարդիկ կարող են հեպատիտ Ա-ի պատվաստանյութ ստանալ որոշակի իրավիճակների դեպքում (ձեր բժշկին խնդրեք հավելյալ մանրամասներ հաղորդել).

- Չպատվաստված երեխաները կամ դեռահասները այնպիսի համայնքներում, որտեղ հեպատիտի Ա-ի բռնկում է առաջանում:
- Չպատվաստված մարդիկ, ովքեր վարակվել են հեպատիտի Ա վիրուսով:
- 1 տարեկան և ավելի ցանկացած մարդ, ով ցանկանում է պաշտպանվել հեպատիտ Ա-ից:

Հեպատիտ Ա-ի պատվաստանյութի արտոնված չէ 1 տարեկանից փոքր երեխաների համար:

Ե՞րբ

Երեխաների համար, առաջին դեղաչափը պետք է տրվի 12-23 ամսականում: Այն երեխաները, ովքեր չեն պատվաստվել մինչև 2 տարեկանը, կարող են պատվաստվել հետագա այցելությունների ընթացքում:

Վտանգավոր գոտում եղող այլ մարդկանց համար, հեպատիտ Ա-ի պատվաստների շարքը կարող է սկսվել այն ժամանակ, երբ անձը ցանկանում է պաշտպանվել կամ երբ նա վարակման վտանգի տակ է:

Ճամփորդողների համար, լավագույն տարբերակը պատվաստների շարքը ճամփորդելուց նվազագույնը մեկ ամիս առաջ սկսելն է: (Պաշտպանության որոշ տարբերակներ կարող են դեռնա արդյունք տալ, եթե պատվաստանյութը տրվի ճամփորդության օրը կամ դրան մոտ ամսաթվի):

Որոշ մարդիկ, ովքեր չեն կարող պատվաստուճ ստանալ մինչ ճամփորդելը կամ ուճ համար պատվաստուճ արդյունավետ չի կարող լինել, կարող են իմունային գլոբուլին կոչվող (IG) ներարկուճ ստանալ: IG-ն անմիջական, ժամանակավոր պաշտպանություն է տրամադրում:

Պատվաստանյութի երկու դեղաչափ է անհարժեշտ տնական պաշտպանության համար: Այս դեղաչափերը պետք է տրվեն նվազագույնը 6 ամսվա տարբերությամբ:

Հեպատիտ Ա-ի պատվաստանյութը կարող է տրվել այլ պատվաստանյութերի հետ միասին:



3 Որոշ մարդիկ չպետք է հեպատիտ Ա-ի պատվաստանյութ ստանան կամ պետք է սպասեն:

- Ցանկացած ոք, ով երբևէ ծանր (կյանքին վտանգ սպառնացող) ալերգիկ հակազդեցություն է ունեցել հեպատիտ Ա-ի պատվաստանյութի նախորդ չափաբաժնի հանդեպ, չպետք է պատվաստանյութի մեկ այլ չափաբաժնի ստանա:
- Ցանկացած ոք, ով ծանր (կյանքին վտանգ սպառնացող) ալերգիա ունի ցանկացած պատվաստանյութի բաղադրիչների հանդեպ, չպետք է պատվաստանյութի ստանա:
- Չեր բժշկին տեղյակ ապիեք, եթե դուք որևէ տեսակի ծանր ալերգիա ունեք, ներառյալ լատեքսի հանդեպ ծանր ալերգիան: Հեպատիտ Ա-ի բոլոր պատվաստանյութերը այլու մին են պարունակում, իսկ հեպատիտ Ա-ի որոշ պատվաստանյութեր պարունակում են 2-ֆենոքսիտերալ:
- Ցանկացած ոք, ով միջին կամ ծանր աստիճանի հիվանդ է ներարկման պլանավորված օրը, հավանաբար պետք է սպասի, մինչև որ առողջանա: Հարցրեք ձեր բժշկին: Մեղմ հիվանդություն ունեցող մարդիկ սովորաբար կարող են ստանալ պատվաստանյութը:
- Չեր բժշկին տեղյակ ապիեք, եթե հղի եք: Քանի որ հեպատիտ Ա-ի պատվաստանյութը ակտիվ չէ (մեռած է), ենթադրվում է, որ հղի կնոջը և նրա չնվաճ երեխայի համար վտանգը շատ փոքր է: Բայց ձեր բժիշկը կարող է պատվաստանյութից սպասվող ցանկացած տեսական զրոյան կշռադատել ընդդեմ պաշտպանության անհրաժեշտության:

4 Որո՞նք են հեպատիտ Ա-ի վտանգները:

Պատվաստանյութը, ցանկացած այլ դեղորայքի պես, հնարավոր է, որ լուրջ խնդիրներ առաջացնի, ինչպիսիք են լուրջ ալերգիկ հակազդեցությունները: Հեպատիտ Ա պատվաստանյութի լուրջ զրոյան կամ մահ պատճառելու վտանգի հավանականությունը շատ փոքր է:

Հեպատիտ Ա-ի պատվաստանյութն ստանալը շատ ավելի անվտանգ է, քան հիվանդությունը վարակվելը:

- Թեթև խնդիրներ**
- Ցավ սրկման տեղում (2 չափահասից 1-ի մոտ և 6 երեխայից 1-ի մոտ)
 - Գլխացավ (6 չափահասից 1-ի մոտ և 25 երեխայից 1-ի մոտ)
 - Ախորժակի կորուստ (12 երեխայից 1-ի մոտ)
 - Հոգևածություն (14 չափահասից 1-ի մոտ):
- Եթե այս խնդիրներն առաջանում են, ապա դրանք սովորաբար տևում են 1 կամ 2 օր:

Լուրջ խնդիրներ

- լուրջ ալերգիկ հակազդեցություն՝ սրկումից մի քանի օրվա երկու փոխարեն մի քանի ժամ հետո (շատ հազվադեպ):
DCE-0452A
AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

5 Ի՞նչ անել, եթե կա միջին կամ ծանր հակազդեցություն:

Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

- Ցանկացած ոչ սովորական վիճակ, ինչպիսիք են բարձր ջերմությունը կամ ոչ սովորական վարքը: Ծանր ալերգիկ հակազդեցության նշանները կարող են ներառել շնչելու դժվարության, խոպոտության և կամ խզխզոցով ծանր շնչառություն, եղեգատեղ, գունատություն, թուլություն, սրտի արագ զարկեր, կամ գլխապտույտ:

Ի՞նչ պետք է ես անեմ:

- Բժիշկ կանչեք կամ հիվանդին անմիջապես բժշկի տարեք:
- Պատմեք ձեր բժշկին, թե ինչ է պատահել, եշք ամսաթիվը, ժամը և այն, թե երբ է տրվել պատվաստանյութը:
- Խնդրեք ձեր բժշկին, բուժքրոջը կամ առողջապահության վարչությանը զեկուցել հակազդեցության մասին լրացնելով պատվաստանյութի բացասական դեպքերի զեկուցման համակարգի (VAERS) ձևաթուղթը: Կամ դուք կարող եք այս զեկույցը ներկայացնել VAERS-ի կայքէջի միջոցով www.vaers.hhs.gov հասցեով կամ գանգահարելով 1-800-822-7967 հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:

6 Պատվաստանյութից ստացած զրոյան զրոյան փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութից ստացած զրոյան զրոյան փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) ստեղծվեց 1986թ.-ին:

Մարդիկ, ովքեր վստահ են, որ իրենք զրոյան զրոյան փոխհատուցման ծրագրի մասին և հայց ներկայացնել գանգահարելով 1-800-338-2382 հեռախոսահամարով կամ այցելելով VICP-ի կայքէջը www.hrsa.gov/vaccinecompensation հասցեով:


7 Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Չեր բժիշկը կարող է ձեզ տալ պատվաստանյութերի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկատվության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն: 1-888-767-4687
- Կապվեք Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնի (CDC) հետ.
- Չանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) կամ
- Այցելեք CDC-ի կայքէջը www.cdc.gov/vaccines հասցեով

Vaccine Information Statement (Interim)
Hepatitis A Vaccine

10/25/2011 Armenian

42 U.S.C. § 300aa-26
Translation provided by
the California Department of Public Health



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետագա պատվաստումների առաջարկված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն: